ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՅԱՐԳԱՆՔԻ ԽՕՍՔԸ ԵՐՈՒԱՆԴ ՄԵԼՔՈՆԵԱՆԻ ԹԱՐՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռոյ Միաբանութիւնը, Գերագոյն Հոգևոր Խորհուրդը, Գէորգեան Հոգևոր Ճեմարանի Տեսչութիւնը, դասախօսական կազմը և ուսանողութիւնը, «Էջմիածին» ամսագրի խմբագրութիւնը և պաշտօնէութիւնը խոր վշտով իմացան անսպասելի, յանկարծական մահը Ս. Էջմիածնին բազում ծառայութիւններ մատուցած երիտասարդ գիտնականին, դասախօսին, խմբագրին, Հայաստանի Հանրապետութեան դիւանագիտական անձնակազմի անդամ ԵՐՈՒԱՆԴ ՄԵԼՔՈՆԵԱՆԻ:

Նա բազում տարիներ անխոնջ սիրով և տքնաջան աշխատանքով իր սպասն էր ընծայել Մայր Աթոռոյս Սրբոյ Էջմիածնին, լինելով վաստակաւոր դասախօս Հոգևոր Ճեմարանում և աւելի քան տասը տարիներ «Էջմիածին» պաշտօնական ամսագրին, որպէս նրա գլխաւոր խմբագիրը:

Մայր Աթոռը ողջունել և գնահատել էր միշտ նրա խոր սիրով և նախանձախնդիր ոգով արտայայտած նուիրումը Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցուն և նրա Հոգևոր Կեդրոնին՝ Ս. Էջմիածնի Մայր Աթոռին: Նրա մահով ոչ միայն կորցնում ենք մի արժէքաւոր բանասէրի և գիտնականի, Հայաստանի Հանրապետութեան հաւատարիմ սպասաւորի, որպէս առաջին արտակարգ և լիազօր դեսպան Լիբանանում, տիպար ընտանիքի հօր, այլև հարազատ և անձնուէր մի զաւակի Մայր Աթոռոյս:

Խորազգած վշտակցութիւն ենք յայտնում նրա տիկնոջ և զաւակներին և Հայաստանի Հանրապետութեան Նախագահին և Արտաքին Գործոց Նախարարութեան և նրա բոլոր աշխատակից գրչակից եղբայրներին և քոյրերին:

Յատուկ հոգեհանգստեան արարողութիւն կը կատարուի Մայր Տաճարում Յունուարի 7-ին, Մեռելոցի օրը:

Թող Աստուած երկնային երանական խաղաղութեան մէջ ընդունի նրա հոգին, երկար կեանք պարգևի իր ընտանիքի բոլոր անդամներին:

Վեհափառ Հայրապետը, բարձր գնահատելով Երուանդ Մելքոնեանի արդիւնաշատ գործունէութիւնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, նրան յետմահու շնորհեց «Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ» շքանշան:

ԳԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ

26 Դեկտեմբերի 1997
ի Ս. Էջմիածին